ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կորեայի Հանրապետություն (Սեուլ) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Դավիթ Խաչատրյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Կորեայի Հանրապետություն, Սեուլ, 2023 թ. մարտի 6-ից 10-ը

4. **Հրավիրող կողմը.**
   Asian Development Bank (ADB), Asian Development Bank Institute (ADBI) and National Information Society Agency of the Republic of Korea (NIA)

5. **Գործուղման նպատակը.**
   Մասնակցություն «Թվային փոխակերպումները հանրային ծառայությունում և թվային կառավարում – թվային սոցիալական պաշտպանությամբ՝ որպես կենտրոնացված կիրարկման օրինակ» խորագրով տարածաշրջանային աշխատաժողովում

6. **Քննարկված թեմաները.** Աշխատաժողովը անց է կացվել 2023թ. մարտի 6-ից 10-ը, որի ընթացքում քննարկվել են պետական ինտիտուտների կողմից մատուցվող հանրային ծառայությունների, ինչպես նաև պահվող և վարվող տվյալների թվայնացմանը առնչվող մի շարք թեմաներ և հարցեր՝ ներկայացումների, հարցուպատասխանի, պանելային քննարկումների և տարբեր գերատեսչություններ այցելություն կատարելու ձևաչափով: Քննարկվել են օրակարգային այնպիսի հարցեր և թեմաներ, ինչպիսիք են.
   - Կառավարության դերը թվային տնտեսության մեջ,
   - Կորեայի թվայնացման փորձը,
   - ԱԶԲ-ի թվայնացմանն ուղղված զարգացման ծրագրերը,,
   - Կորեայի կառավարության տվյալների էկոհամակարգը՝ կենտրոնանալով բաց հանրային մատչելի տվյալների, մեծ տվյալների և արհեստական բանականության տվյալների վրա,
   - Արհեստական բանականությունը սոցիալական ծառայություններում,
   - Թվային փոխակերպումը արդյունաբերության մեջ,
   - Պատմությունը և Կորեայի տեսլականը թվային կառավարման համար,
   - Թվային հարթակի կառավարում և նորարարություն,

- Կառավարության վճարային համակարգը Կորեայում,
- Կառավարություն կառավարություն (G2G) տվյալների փոխանակում և ինտեգրում,
- Ամպային պետական քաղաքականությունը,
- Կիբերանվտանգություն և տվյալների պաշտպանություն,
- Թվային ներառման քաղաքականություն,
- Այցելություն «Սեուլի զբաղվածության և բարեկեցության կենտրոն»,
- Սոցիալական ծառայությունների թվայնացումը հետքովիդյան շրջանում,
- Փոփոխությունները հանրային առողջապահական ծառայություններում,
- Փոփոխություններ տարեցների խնամքի ծառայություններում,
- Արհեստական ինտելեկտի վրա հիմնված խնամքի ծառայության լուծումները Հարավային Կորեայում,
- Թվային տրանսֆորմացիան աշխատաշուկայում,
- Այցելություն Կորեայի սոցիալական ապահովության տեղեկատվական ծառայություն,
- Թվային հանրային ենթակառուցվածքի օգտագործմամբ սոցիալական պաշտպանության ծրագրերի իրականացում,
- Շարժունակություն և միգրացիա,
- Գենդերային դերը բնակչության քաղաքականության մեջ:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.** ·

Աշխատաժողովի ընթացքում հայկական պատվիրակությունը առիթ ունեցավ ներկայացնելու «Նորք տեղեկատվական կենտրոն» հիմնադրամի կողմից մշակված և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կիրառվող «e-Disability» հարթակը, ինչպես նաև արհեստական բանականությունը սոցիալական պաշտպանության ոլորտում կիրառելու ՀՀ օրինակը, որոնք առաջացրեցին մեծ հետաքրքրություն:

Կորեական փորձը սոցիալական պաշտպանության թվային փոխակերպման ոլորտում ուներ իմպլեմենտացիոն բարձր մակարդակ, որը ներառում էր նորարարական տեխնոլոգիաներ, արհեստական բանականության լուծումներ և յուրահատուկ թիրախային ծրագրեր:

Աշխատաժողովի ընթացքում մասնակից պետությունների ներկայացուցիչների հետ մտքեր են փոխանակվել յուրաքանչյուր պետության կողմից սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող թվային լուծումները, որպես առաջ ծառացած ժողովրդագրական խնդիրների լուծման, դրանց հաղթահարման ուղղված ծրագրերի և արդյունքների շուրջ:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Աշխատաժողովի արդյունքում հաջողվեց նաև հետագա համագործակցության պայմանավորվածություններ ձեռք բերել, որոնք ուղղված են ՀՀ սոցիալական

պաշտպանության ոլորտի թվային ծառայությունների որակի, հասցեականության և արդյունավետության բարձրացմանը թվային նորարարությունների կիրառմամբ: Մասնավորապես նախնական պայմանավորվածություն ձեռք բերվեց ԱԶԲ ներկայացուցիչների հետ Հայաստանում հիմնել գիտական հետազոտական և զարգացման կենտրոն (R&D) «Նորք ՏԿ» հիմնադրամի ներուժի վրա, և իրականացնել հետազոտական աշխատանքներ՝ սոցիալական պաշտպանության ոլորտում վերլուծական և զարգացման ծրագրեր իրականացնելու համար: Ֆինանսավորման ձևաչափը կքննարկվի հաջորդիվ:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Սոցիալական պաշտպանության ոլորտում մատուցվող ծառայությունների թվայնացման խնդիրը դիտարկել որպես առաջնահերթություն, քաղաքացիներին մատուցվող ծառայություններն ավելի հասցեական, մատչելի և հեշտ կիրառելիություն ապահովելու նպատակով: Կորեայի Հանրապետության թվայնացման փորձը ևս մեկ անգամ հաստատեց Հայաստանի Հանրապետությունում ծառայությունների թվայնացման օրակարգի ճանապարհային քարտեզի իրատեսականությունն ու հնարավորությունը:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

17.03.2023թ.

Recoverable Signature

X

ԴԱՎԻԹ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN DAVIT 2401820493